ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱ ՇԻՐԱԶԻ
ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, անվանի գրող, հրապարակախոս Սիլվա Կապուտիկյանի և ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Շիրազի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ս. Կապուտիկյան փողոց հ. 1 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱ ՇԻՐԱԶԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919թ. հունվարի 20-ին Երևանում: 1933թ. «Պիոներ կանչ» թերթում լույս է տեսել նրա առաջին «Պատասխան Թումանյանին» բանաստեղծությունը: 1937թ. ավարտել է Երևանի ցուցադրական (Ն.Աղբալյանի անվան) դպրոցը: 1941թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1949-1950թթ. սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում:

1941թ. եղել է Հայաստանի գրողների միության անդամ:

1945թ. լույս է տեսել «Օրերի հետ» բանաստեղծությունների առաջին ժողովածուն: 1952թ. «Իմ հարազատները» բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է ԽՍՀՄ, իսկ 1988թ.՝ ՀԽՍՀ Պետական մրցանակների: Նույն թվականին ստացել է նաև իտալական «Նոսիդիե» գրական մրցանակ:

Կյանքի վերջին տարիներին մեծ աշխատանք է կատարել հրապարակագրության ոլորտում՝ «Իմ ժամանակը», «Չեմ կարող լռել», «Վերջին զանգ»:

Սիլվա Կապուտիկյանը եղել է ԽՍՀՄ, Հայաստանի Հանրապետության, Աջարիայի Ինքնավար Հանրապետության պետական, Իսահակյանի անվան մրցանակների դափնեկիր:

1970թ. արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1980թ.՝ Վրաստանի մշակույթի վաստակավոր աշխատողի, ապա՝ Երևանի պատվավոր քաղաքացու կոչումներին:

1998թ. Քեմբրիջի միջազգային աշխարհագրական ինստիտուտի կողմից ստացել է «Տարվա կին» տիտղոսը: Պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով: Եղել է ԽՍՀՄ Գրողների միության նախագահության անդամ, սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության», Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիաների անդամ: Ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Սիլվա Կապուտիկյանը մահացել է 2006թ. Երևանում, թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում: 2009թ. նրա ապրած տանը բացվել է բանաստեղծուհու տուն-թանգարանը:

ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Շիրազը /Արամազդ Կարապետյան/ ծնվել է 1941թ. հունիսի 8-ին Երևանում: 1966թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների Հայաստանում և արտերկրում: 1968թ. եղել է Հայաստանի նկարիչների միության անդամ:

Նրա աշխատանքները ցուցադրվել են Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Թբիլիսիում, Բեյրութում, Լոս Անջելեսում, Չիկագոյում, Մոնրեալում, Նյու Յորքում, Լոնդոնում, Փարիզում և այլուր: Արա Շիրազի գործերից են՝ «Պարույր Սևակ» (1974թ.), «Եղիշե Չարենց» (1977թ.), «Ալեքսանդր Մյասնիկյան» (1980թ.), «Հովհաննես Շիրազ» (1989թ.), «Տիգրան Պետրոսյան» (1989թ.), «Անդրանիկ Օզանյան» (2002թ.), «Վազգեն Առաջին» (2008թ.) քանդակները և այլն: Աշխատանքների մեծ մասը պահպանվում են Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում և Երևանի ազգային պատկերասրահում:

Արա Շիրազը եղել է ԽՍՀՄ նկարիչների միության քարտուղարության անդամ, 1987թ. ընտրվել է Հայաստանի նկարիչների միության նախագահ:

1977թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչման, 1979թ.՝ Հայաստանի Պետական մրցանակի՝ Երևանի «Դվին» հյուրանոցի զարդաքանդակների համար, 2009թ.՝ Հայաստանի ժողովրդական նկարչի կոչման:

Արա Շիրազը մահացել է 2014թ. Երևանում:

ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, անվանի գրող, հրապարակախոս Սիլվա Կապուտիկյանի և ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Շիրազի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ս. Կապուտիկյան փողոց հ. 1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ Ա. Դեմիրճյանի և ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ա. Մխիթարյանի կողմից։

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱ ՇԻՐԱԶԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սիլվա Կապուտիկյանի և Արա Շիրազի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱ ՇԻՐԱԶԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սիլվա Կապուտիկյանի և Արա Շիրազի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ